ՆՈՐ ՔՐԷԱԿԱՆ ՄԻ ԲԱՌ

ՄԱՐԿ ՏՈՒԷՆԻ

Վերջին տասնեակ տարիներում դատաստանական աշխարհը երևան հանեց խելագարութեան շատ զարմանալի դէպքեր, որոնց մասին առաջ չիշատակւում էր միայն պատմութեան մէջ [1]։

I

Մի այդպիսի դէպք տեղի ունեցաւ, զորօրինակ, սորանից քսան և երկու տարի առաջ յանցաւոր Բօլդուինի դործում։

Բօլդուինը երեխայութիւնից սկսած յայտնի էր, իբրև չարասիրտ, քինապահ և կուարար մի անձ։ Մի անդամ նա մի տղայի աչքը հանեց և այնպէս մարսեց այդ չանը, որ ոչ ոք չէր կասկածիլ անդամ՝՝ թէ նա երբ և իցէ ղղջալու հակում ունեցած լինի։ Եւ քանի քանի այդ տեսակ անգութ դործեր էր նա կատարել։

Բայց վերջապէս մի անդամ նա իրան թոյլ տուեց մի արտաքոյ կարգի վարմունք։ Մի օր երեկոյեան, իսկոյն մութն ընկնելուց յետոյ, նա կանդ է առնում մի տան առաջ, զանգահարում է և երբ տան տէրը երևում է դռնամէջ, Բօլդուինը արձակում է նորա վերայ ատրճանակը, նորան վայր գցում և պատրաստւում է փախչելու. բայց իսկոյն բռնւում է։

---

[1]) Տուէնը այստեղ ծաղրում է այն դասերը, երբ չանցաւորներին արդարացնում են խելագարութեան պատրւակով կամ երբ իսկական խելագարութիւնները պատժի են ենթարկւում։

Դեռ երկու օր այդ դէպքից առաջ, նա իւր զարճութեան համար վիրաւորած է եղել մի անդամալոյծի անպատիժ կերպով։

Այս տեսակ անձ էր Բոլդուինը։ Նորա գործը շարունակւում էր երկայն ժամանակ և մեծ աղմուկ էր հանում։ Բոլոր համայնքը սաստիկ զայրացած էր Բոլդուինի վերայ։ Շատերը ասում էին, որ բաւական է, որչափ այդ խստասիրտ և անողոք չարագործը վիշտ է պատճառել իւր կեանքի ընթացքում, այժմ նա պէտք է օրէնքի առաջ պատասխանի և պատժւի։

Բայց այդ ասողները սխալւել էին։

Դուրս եկաւ, որ Բոլդուինը իւր յանցանքը գործելու ժամանակը խելագար դրութեան մէջ է եղել։ Արդարացնելու հնարը գտնւած էր։

Պաշտպանը աշխատում էր ապացուցանել, որ Բոլդուինը սպանութեան օրւայ առաւօտեան ինն և կէս ժամին խելագարւել էր և այդ դրութեան մէջ մնացել ճիշդ տասն և մէկ ժամ ու կէս։

Այս հանգամանքը մեղմացրեց գործած յանցանքը և հերոսը հրատարակւեց արդարացրած։

Ուրեմն, եթէ դատաստանը, դիցուք, ուշադիր եղած լինէր գրգռւած տգէտ համայնքի ձայնին, նա պէտք է սխալմամբ սոսկալի պատժի ենթարկած լինէր մի խեղճ մարդու, որ միայն կարճատև խելագարութիւն է ստացած եղել։

Բոլդուինը դուրս եկաւ դատաստանից մաքուր, ինչպէս աղաւնի։ Եւ թէև ազգականները և ծանօթները ըստ պարտականութեան բարկացել էին համայնքի վերայ, սորա կասկածների և կարծիքների պատճառով, այնու ամենայնիւ բանը քնացրին, իրանց բարկութիւնը տեղ չը հասցրին և համայնքը չը հալածեցին։

Բոլդուինների ազգը շատ ունևոր և հարուստ էր։

Այս դէպքից յետոյ երկու անգամ էլ կրկնւեց Բոլդուինի խելագարութիւնը և երկու անգամուն էլ նա սպանեց այնպիսի մարդկանց, որոնց հետ քէն էր ունեցել։ Իւրաքանչիւր դէպքում սպանութեան կից պարագաները այնպէս ծանրացնում էին մեղը և եղեռնագործութիւնը կատարւել էր այնպիսի անդութ և նենգ կերպով, որ եթէ Բոլդուինի խելագարութեան անունը չը լինէր, նորան կախած պէտք է լինէին առանց այլևայլութեան։

Այն էլ սակայն ասենք, որ այդ արդարանալը շատ էլ հեշտ գլուխ չ'եկաւ։ Առաջին յանցանքից ազատուելու համար հարկաւոր եկաւ նորա հասարակական և տոհմական դիրքի ազդեցութիւնը, իսկ երկրորդի համար—պահանջւեց նաև ո՛չ պակաս, քան տասն հազար դոլլար փող։

Ասում են, որ սպանուածներից մէկին Բոլդուինը գեռ տասներկու տարի սորանից առաջ սպառնացած է եղել մեռցնելու։ Տեսէ՛ք հիմի բանը։ Այնպէս է պատահում, որ այն խեղճը անցնում է եղել խուլ փողոցով հէնց այն րոպէին, երբ Բոլդուինի խելագարութիւնը բռնած է եղել և թշւառը ստանում է գնդակի հարւած մէջքի կողմից և ընկնում։

II

Ցիշենք նոյնպէս Հակետի գործը։

Հակետը երկու անգամ հրապարակապէս յարձակւել էր գաւազանով գերմանացի մսագործի վերայ և երկու անգամ էլ լաւ ծեծ էր կերել մսագործից։

Հակետը փառասէր, հարուստ և լիրբ մի մարդ էր, որ չափազանց պարծենում էր իւր ծագումով և տոհմով և երևակայում էր թէ շրջապատողները պէտք է նորա հարստութեան առաջ գլուխ խոնարհեն։

Նա ամբողջ երկու շաբաթ հնարներ էր որոնում մսագործից իւր վրէժը հանելու և ահա մի օր, յանկարծակի խելագարւելով, ղինւում է ոտքից մինչև գլուխ, գնում է քաղաք և սպասում է փողոցներում մեր քանի ժամ մինչև պատահում է մսագործին, որ հանգիստ ու հանդարտ անցնելիս է լինում՝ իւր կնոջ հետ թեւ թեւի տուած։ Այն ժամանակ Հակետը թագ է կենում մի դուռն ետև և երբ զոյգը մօտենում է, նա դանակը խրում է մսագործի կոկորդը և իսկոյն սպանում։ Կինը բռնում է ընկնող մարմինը և գետին գնում։

Հակետը նայում է այրիացած թշւառ կնոջը և կատակի ձևով պսում, որ ինքը այնքան ճարպիկ և վարպետ կերպով է հարւած տուել, որ այրին կարող է, եթէ ուզենայ, երկրորդ ամուսնութեան մասին ազատ հոգալ։

Այս եղելութիւնից յետոյ Հակետը իւր մի բարեկամին պատա-

հելուց ասել է, թէ իւր հասարակական դիրքը՝ համեմատած անանշան մագործինի հետ՝ կարող էր մի այդ տեսակ անսպասելի փարմունք առաջ բերել։ Վերջին երկու հանգամանքը, այսինքն մագործի կնոջը ասածը և այդ բարեկամին հաղորդածը, ընդունել էին դատաստանի ժամանակ իբրև խելագարութեան ապացոյցներ և Հակետը այդպիսով աղատուել էր պատժից։ Առաջ երդուեալները չեն ուզում եղել այս ապացոյցները բաւականաչափ համոզիչ համարելու, որովհետև յանցաւորը սպանելուց առաջ խելագար չէ եղել երբէք և սպանութիւնից յետոյ էլ իսկոյն խելքը գլխին է եղել, ինչպէս միշտ։ Բայց երբ փաստաբանը յայտնում է, որ Հակետի հօրեղբօր որդին խելագար է եղել և որ ինչ զարմանալին է, ունեցել է Հակետի քթին շատ նման մի քիթ, պարզուում է, որ Հակետին խելագարութիւնը բնականաբար կարող էր այցելել։ Եւ նորան արդարացնում են։

Դեռ բանը որտեղ է հասնում, որ Հակետի կնոջ բարեկամները իրանց վիրաւորուած են զգում այս դէպքից։

Անկարելի է, սակայն, հաղորդել խելագարութեան այն զարմանալի դէպքերը, որ վերջին երեսուն քաւասուն տարիներում զբաղեցրել է հասարակութեան ուշադրութիւնը։

III

Այժմ պատմենք մի քանի ուրիշ տեսակ դէպքեր էլ։

Երեք տարի առաջ, զօրօրինակ, քննուում էր Ջիւրջինի գործը, որ կայացած էր հետևեալում։ Ջիւրջին անունով մի աղախին մի խուլ և մութ գիշեր մտնում է իւր տիկնոջ ննջարանը և դանակով մաս մաս է անում խեղճ կնոջը։ Ցետոյ մարմինը քաշ է տալիս սենեակի մէջ տեղը, ոտով կոխոտում, աթոռներով ծեծում և ամեն կերպ ջարդում։ Ցետոյ չարագործը պատռում է մի փափուկ բարձ, միջի փետուրը դուրս թափում սենեակի մէջը, վերան ածում նաւթ և վառում, որպէս զի իւր յանցանքի հետքը ծածկի։

Ցետոյ վեր է առնում սպանուած տիկնոջ փոքր երեխային իւր արիւնաթաթախ ձեռքերը և, դուրս դալով տնից, վազում է ոտաբոբիկ ձիւնի վերայով մի հեռու ծանօթի տուն և այնտեղ հնարում է մի անհաւատալի, անմիտ պատմութիւն, իբր թէ օտար մարդիկ

եկել են Նորա տիկնոջ տունը և կրակ տալ։ Յետոյ սկսում է աղեկտուր լաց լինել և չը մտածելով, որ Նորա ձեռքերի և շորերի վերայ եղած արիւնը կարող է կասկած յարուցանել, անզգուշաբար ակնարկներ է անում, որ նա երկիւղ է կրում, թէ մի գուցէ այն մարդիկը սպանած լինեն Նորա տիկնոջը։

Շատ հարց ու փորձերից, աղախնի սեփական ցուցումներից և վկաների տուած տեղեկութիւններից բոլորովին պարզ կերպով հաստատւում է, որ տիկինը միշտ բարի է եղել դէպի իւր աղախինը և որ սպանութեան գործում ոչ մի վրէժի նշոյլ անգամ չէ եղել. Նոյնպէս պարզւում է, որ աղախինը ոչ մի բան չէ վեր առել կրակ տուած տնից, մինչև անգամ ինքը առանց կոշիկի է դուրս պրծել, այնպէս որ կողոպտելու էլ մտադրութիւն չէ ունեցել։

Ընթերցողը այժմ երևի մտածում է՝ թէ այսուղ արդէն անկասկած խելագարութեան դէպք է։ Բայց հէնց այս անգամ նա կը խաբւի։

Ցանցաւոր աղախնի պաշտպանութեան համար ոչ ոք ծպտուն չը հանեց, խելագարութեան անունը չը յիշեց։ Դատաստանը որոշեց խիստ պատիժ։ Զը գտնուեց մէկը, որ նահանգապետին դիմէր՝ պատիժը թեթևացնելու համար և յանցաւորը կախուեց իսկոյն։

IV

Մի քանի տարի սորանից առաջ հրատարակուած էր լրագիրներում մի պատանու բերանից քաղած հետաքրքրաշարժ մի խոստովանութիւն։ Սկզբից մինչև վերջը այդ խոստովանութիւնը մի անկապ, խառնիխիթոր ցնորաբանութիւն էր, ինչպէս և Նորա այն երկայն ճառը, որ արտասանել էր կառափնատեղում կախուելուց առաջ։

Այդ պատանին բոլորովին անբացատրելի պատճառով որոնում է եղել այնպիսի մի հնար, որ տգեղացնի մի ջահիլ աղջկայ երես, որ ոչ ոք չը ցանկանայ Նորա հետ պսակուել։ Ինքը սիրում չէ եղել աղջկան և մտադիր չէ եղել հետը պսակուելու. բայց և չէ ցանկացել թոյլ տալու, որ մի ուրիշը պսակի։

Նա չի համաձայնում եղել աղջկայ հետ մի որ և է տեղ գնալ

զբօսնելու, բայց և ոչ ոքի էլ թոյլ չի տալիս եղել օրիորդին ուղեկցելու։

Մի անգամ պատանին հրաժարւում է այդ աղջկայ հետ հարսանիք գնալուց. բայց երբ տեսնում է, որ աղջիկը մի ուրիշ երիտասարդի հետ գնացել է, ինքն էլ գնում է և. ճանապարհին սպասում է, որ պատահի դոցա կառքին և կամ աղջկան սոիպի յետ դառնալ կամ թէ նորա ուղեկցին սպանի տեղն ու տեղը։

Աղջկայ երեսը տգեղացնելու միտքը ամբողջ տարի նորան հալածում է եղել։ Եւ վերջապէս նա սկսում է իրագործել և յաջողեցնում է իւր մտադրութիւնը։

Մի անգամ, երբ աղջիկը նստած է լինում ընթրիքի իւր ծնողների, եղբայրների և քոյրերի հետ, չարագործը մտադրւում է այնպէս խփել ատրճանակը, որ չը վնասելով առողջութեան՝ խաղխզի փոքր ինչ թուշը և տգեղացնի դէմքը. բայց գժբաղդաբար գնդակը մի քիչ թեքւում է և աղջկան սպանում։

Սպանողը մինչև իւր կեանքի վերջին վայրկեանը մեղադրում էր ճակատագրական այն բերմունքը, որ սոիպել էր աղջկան շուռ տալ իւր երեսը հէնց ուղիղ հարուածի ժամանակը։ Եւ մինչև վերջն էլ՝ նա համոզուած էր, որ աղջկայ մահուան պատճառը ինքը աղջիկն է եղել։

Այս անկասկածելի խելագարկը կախուեց։

Բայց խելագարութեան խնդիր չը յարուցուեց։

V

Ինչպէս երևում է՝ խելագարութիւնը աշխարհումս բազմանում է, իսկ յանցանքը անհետանում։ Այժմ՝ էլ սպանողների անուն չենք լսում։

Առաջուայ ժամանակները, եթէ դուք մի մարդ էիք սպանած լինում, կարող էր պատահել, որ ձեր խելքը գլխներիդ չէ եղել. իսկ այժմ, եթէ դուք լաւ տոհմի զաւակ էք և հարուստ, ձեր վարմունքը հէնց ինքը—կը համարւի ապացոյց ձեր խելագար լինելուն։

Նոյնպէս էլ՝ եթէ մի լաւ տոհմի անդամ, որ բարձր հասարակական գիրք ունի, եթէ մի բան գողանայ, նորան պաշտպանող փաստա-

բանը վերագրում է այդ վարմունքը մոլութեան, առանձին հիւանդոտ սովորութեան կամ ուրիշ խօսքով՝ մի տեսակ խելագարութեան։

Եթէ բարձր դիրք ունեցողին մէկը վանում է իւր կարողութիւնը անբարոյական վարքով և վերջացնում է իւր կեանքը թոյնով կամ գնդակով, նորա մասին ասում են, որ նա ենթարկուած է եղել մոռաւոր ընդունակութիւնների ժամանակաւոր շեղումին։

Արդե՞օք խելագարութեան վերագրելը չափազանցութեան չէ հասել։ Արդե՞օք նա զէնք չէ դարձել անբարեխիղճների ձեռքին։

Վերջին ժամանակներս ամենայն մի սպանող այնպէս է դուրս բերւում, որ եղեռնագործութիւնը կատարելուց առաջ՝ իբր թէ նա եղել է խելագարութեան ենթակայ։

Բաւական է, որ յանցաւորը խօսք բաց անի աստղների մասին, իսկոյն վճռում են, որ նա խելագար է։ Եթէ նա լաց եղաւ իւր վիճակի վերայ, բարեկամները գլուխները թափ են տալիս մի տեսակ երկիւղով, որով ուզում են ասել, թէ օրանը վատ է, խելքը կարծես տեղումը չէ։ Եթէ յանցաւորը սպանութիւնից յետոյ շփոթուած է լինում, կասկածոտ և անհանգիստ, նա առանց այլ և այլութեան դասւում է խելագարների շարքում։

Իսկն ասած՝ մեզ հարկաւոր են օրէնքներ ոչ թէ յանցանքների դէմ, այլ մի յատուկ օրէնք խելագարութեան դէմ։ Ահա ուր է իսկական չարիքը։